Երևան քաղաքում ավտոբուսներից և/կամ մետրոպոլիտենից օգտվելու համար[1] «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի Visa Star քարտերով վճարելը խրախուսելու արշավի պայմաններ

Արշավին կարող են մասնակցել՝

1. **6–18 տարեկան** այն **ՀՀ քաղաքացիները**, որոնք **2026 թվականի հունվարի 9-ից 2026 թվականի մարտի 31-ը ներառյալ** կդառնան «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հաճախորդ, կպատվիրեն և կակտիվացնեն **Visa Star** քարտ, **MyAmeriaStar** համակարգն ակտիվացնելու համար մուտք կգործեն այդ համակարգ և արշավի գործողության ժամկետի ընթացքում Երևան քաղաքում **ավտոբուսներից և/կամ մետրոպոլիտենից օգտվելու համար կվճարեն** իրենց Visa Star քարտով:
2. **6–18 տարեկան ՀՀ քաղաքացի** «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գործող հաճախորդները, որոնք **2025 թվականի հունվարի 9-ից 2026 թվականի մարտի 31-ը ներառյալ MyAmeriaStar** համակարգն ակտիվացնելու համար մուտք կգործեն այդ համակարգ և արշավի գործողության ժամկետի ընթացքում Երևան քաղաքում **ավտոբուսներից և/կամ մետրոպոլիտենից օգտվելու համար կվճարեն** իրենց Visa Star քարտով:
3. Արշավի պայմանների առաջին և երկրորդ կետերում նշված ՀՀ քաղաքացիները Երևան քաղաքում ավտոբուսներից և/կամ մետրոպոլիտենից օգտվելու համար կատարած յուրաքանչյուր վճարի դիմաց կստանան **հետվճար՝** 150 ՀՀ դրամի չափով (առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերի): Արշավի գործողության ժամկետի ընթացքում յուրաքանչյուր հաճախորդին հետվճար տրամադրվում է կատարված առավելագույնը 10 վճարների համար,

[1]Արշավի համաձայն՝ ավտոբուսներից և/կամ մետրոպոլիտենից օգտվելու համար կատարվող վճարը Երևան քաղաքի վարչական տարածքում ավտոբուսով և/կամ մետրոպոլիտենով ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություններից օգտվելու համար կատարվող տեղական վճարն է:

առավելագույնը՝ 1500 ՀՀ դրամի չափով (առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերի):

4. Երևան քաղաքում ավտոբուսներից և/կամ մետրոպոլիտենից օգտվելու համար յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարված վճարների համար հետվճարների հաշվարկն ու վճարումը իրականացվում է տվյալ ամսվան հաջորդող ամսվա առաջին երկու շաբաթների ընթացքում: Հետվճարը փոխանցվում է Visa Star քարտին, որով կատարվել է վճարումը:
5. Հետվճար չի տրամադրվում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված քարտով վճարելու միջոցով ավտոբուսների և/կամ մետրոպոլիտենի ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու կամ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված քարտով էլեկտրոնային դրամապանակի միջոցով ավտոբուսների և/կամ մետրոպոլիտենի էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում:
6. Հետվճարը տրամադրվում է այն անձանց, ովքեր հետվճարի ստացման դրությամբ հանդիսանում են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գործող հաճախորդ, հետվճարի ստացման դրությամբ նրանց հաշիվները փակված կամ կասեցված չեն, ինչպես նաև հետվճարի ստացման դրությամբ այդ հաշիվներով կատարվող գործառնությունների կատարումը սահմանափակված չէ: